

ՄԱՅՐ ԵՈՒԹԱՎ ԶԵՆԱԳՐԱՅ ՍՐԲՈՑ ԵՎԱԿՈՒՅԱՆՑ:  
 Հատոր Գ: Կազմեց Նորայր Եղս. Պարպեան:  
 Բառածալ, քարակազմ, 696 էջ, ձկարագրոյ:  
 Երևուստէմ, 1909:

Ծնորհիւ Կիւլպէնկեան Հիմնարկութեան  
 Հայկական Մատենաշարին, կ'ունենանք նաեւ  
 Երուսաղէմի մեծ ձեռագրաց հաւաքման  
 չորրորդ հատորը՝ որով վանքին ցուցակա-  
 գրուած ձեռագրաց թիւը կը հասնի 1365ի,  
 այսինքն աւելի քան մէկ երրորդը հաւաք-  
 ման ձեռագրերներուն:

Ցուցակագիր Նորայր Սրբազան խղճմը-  
 տորէն կատարած է իր դործը, ինչպէս նաեւ  
 խորհ՝ նոյնպէս ալ իր այս ցուցակով: Այս  
 հատորին մէջ ցուցակագրուած 365 ձեռա-  
 գիրներուն կէսը Ժէ դարէն կամ անկէ առաջ  
 գրուած են: Մեծագոյն մասամբ Ժողովա-  
 ծուներն են եւ միայն երեք Աւետարանն եւ եր-  
 կու Աստուածաշունչ կան:

Պարունակութեամբ շահեկան են բազմա-  
 թիւ ձեռագրերներ: Թիւ 1096 Ժողովածոն  
 1633էն ստացուած է Բարսեղ բարունակե-  
 աւն, որ Ամթեցին է: Թիւ 1102ի մագաղաթի  
 վրայ մանրանկարները՝ կրնան եկամուտ ըլ-  
 լալ եւ ԺԸ դարէն աւելի առաջ: Թիւ 1128-ը  
 անտարակոյս 1411ին գրուած է Եկեղեցաց  
 դաւառ: Թիւ 1133ի եւ 1239ի «Գովասանք  
 Թռչնոց» տաղը պահասաւոր է եւ արդէն  
 ծանօթ ամբողջական հրատարակութեամբ  
 իմ կողմէս: Թիւ 1136ի գրիչ Նոր(ա)տունի  
 զպիր հաւանարար նոյնն է Նորատունի  
 Վրդ. Հոռմկլայեցիի հետ, որ 1653ին Սե-  
 բաստիա Ս. Հրեշտակապետ գրած է Մեկ-  
 նութիւն Մատթէի: Թիւ 1187ի գրիչը յայտ-  
 նապէս Տաւնական քահանան է, որուն գըր-  
 չին է նաեւ Թիւ 1262-ը՝ 1378էն, ինչպէս  
 նաեւ Պերլինի Թիւ 25ը՝ 1361էն: Որոշ է նաեւ  
 որ 1187 Թիւ ձեռագրին Պողոստիկոս Սըր-  
 բազանի տուած 1415 Քրիստոսի թուակարը  
 ճիշդ չէ եւ պէտք է ԺԴ դարու վերջին քա-  
 ուորդին մէջ նշանակել: Թիւ 1235ը Յովհան-  
 նէս Վրդ. Մրգուզի հեղինակութիւնն է: Մե-  
 ծարթէք նորութիւն է Թիւ 1259-ը՝ Գիրք  
 Հագեաց եւ Հրեշտակաց, զոր թարգմանած

է Տրա Ղուան: Այս ձեռագիրը եւ յիշատա-  
 կարանը անծանօթ մնացած են Ամիրտովլաթ  
 բժիշկին կենսագրութեամբ զբաղողներուն:  
 Գրուած է 1481ին Աստուածատուր սարկա-  
 ւազէ, «ի ինդրոյ Ամիրտովլաթ բժշկին,  
 յիշատակ հոգւոյ իւրոյ, ի վայելումն զա-  
 ւակաց իւրոց»: Գրութեան վայրը հաւա-  
 նաբար Կ. Պոլիս, ուր կը գտնուէր Ամիր-  
 տովլաթ այդ ատեն: Զուգադիպութեամբ  
 մը, սոյն ձեռագրին բնօրինակն ալ կը գըտ-  
 նուի Երուսաղէմի հաւաքման մէջ, գրուած  
 1307ին՝ երբ թարգմանուած էր:

Ցուցակը կ'աւարտի զանազան ցանկերով,  
 որոնք շատ կը հեշտացնեն ուսումնասէրին  
 դործը այս հատորէն օգտուելու:

Ե. ՔԻՒՐՏԵԱՆ

ՀԱՅՎԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՏՈՒԹԻՒՆ: Կազմեց Ար-  
 մենակ Սայմաւելն: Լաքակազմ, մեծ ուքա-  
 ծալ, էջ 472: Երևան, 1909:

Վերջապէս լոյս տեսաւ Արմենակ Սալ-  
 մասլեանի այս մեծարժէք գործը: Հատորին  
 վրայ ակնարկ մը իսկ պիտի բաւէ դիտողին  
 խորհիլ տալու այն հսկայական գործը եւ  
 անխառնաճեղք որ Մայմաւելանը կատարած է:  
 Կարծես կործին աննուանելի դժուարուն  
 թիւները շրջակէին, նախանձոր ու անպար-  
 կելշտ խոշընդոտներն ալ հանուեցան գործին  
 արտասահման հրատարակութեան համար:  
 Սակայն ուրախ եմ որ Սայմաւելանն, շնորհիւ  
 Երևանի հայագէտներուն, կըցաւ տեսնել  
 իր բազմաշարչար գործին հրատարակու-  
 թիւնը:

Գործը մասնաւորապէս կը պարունակէ  
 Փրանսերէն, գերմաներէն եւ անգլերէն գիր-  
 քեր՝ որոնք զոնէ մասամբ նիւթ կը պարու-  
 նակին Հայոց եւ Հայաստանի մասին, կը խօ-  
 սին Հայ մշակոյթի, կրօնքի, եւայլնի մա-  
 սին: Արդարեւ Արարատ Լարիպեանի «Քրմ-  
 բագրի Կողմից» յառաջարանին մէջ ըսածին  
 պէս, «Չնայած Հայկական Մատենագիտու-  
 թիւն աշխատութիւնը ոչ բոլոր ղէպքերում  
 է համապատասխանում մեր մատենագիտու-  
 կան — պահանջներին... նկատի ունենալով

1 Ապահովարար Խիզանի դպրոցի մամբակարմեր  
 են ծձ դարու վերջէն կամ ժէ դարու սկիզբէն: